



ԱՆՈՏԱՑԻԱ

Միքայել Նարիմանյան, Սամվել Ավետիսյան, Արամ Բայկով,
Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Սիմուլյացիոն կրթական տեխնոլոգիաների ներդրումը Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում

Ներկայումս բժշկական կրթությունը բնորոշ է արագընթաց զարգացում՝ պարադիգմի փոփոխությամբ՝ դեպի փոքր խմբերով դիդակտիկ պարապմունքների եւ սեւեռմանը կլինիկական դեպքերի սցենարների կիրառման վրա: Մի շարք հետազոտություններով ցույց է տրվել սիմուլյացիայի արդյունավետությունը հիմնական տեսական առարկաների, կլինիկական գիտելիքի, գործնական հմտությունների, թիմային աշխատանքի եւ հաղորդակցման կարողությունների դասավանդման եւ ուսումնառության հարցում:

2012թ., հաշվի առնելով արտերկրի բժշկական կրթության ոլորտում հեղափոխական տեղաշարժերը՝ սիմուլյացիոն բժշկական կրթության մեթոդաբանության ներդրման հետ կապված, սիմուլյացիոն ուսումնական կենտրոնի հիմնումը ԵՊԲՀ-ում ներառվեց բուհի ռազմավարական ծրագրում: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Կրթության որակ եւ համապատասխանություն երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհի շնորհիվ բուհին հաջողվեց 2013-2015թթ., 18 ամսվա ընթացքում, հիմնել սիմուլյացիոն ուսումնական կենտրոն եւ ներդնել դասավանդման, ուսումնառության եւ ստուգման նորարարական բարձր տեխնոլոգիաներով մեթոդաբանություն:

Նորարարական սիմուլյացիոն կրթության մեթոդաբանության ներդրումը ԵՊԲՀ-ի «բուժական գործ» մասնագիտության մագիստրոսական, բակալավրական ու անընդհատ եւ ինտեգրված կրթական ծրագրերում ակնհայտորեն բարելավեց եւ բարելավում է կրթության որակը եւ արդյունավետությունը: Ելնելով մեթոդաբանության ներդրման հաջող փորձից՝ համալսարանի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ԵՊԲՀ-ի 2016-2012 թթ. ռազմավարական ծրագրում ներառել այլ ՄԿԾ-ների բարելավման հիմնահարցը: